ԴԱՐՁՅԱԼ ԱՂՎԵՆԻ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՏԱՐԵԹՎԻ ՄԱՍԻՆ

Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

Վաչագան Բարեպաշտը Հայոց արևելից կողմանց պետական ու մշակութային կյանքի ամենալուսավոր դեմքերից մեկն էր, այնքան շրջահայաց ու խելամիտ հայրենասեր, որ կարողացավ օգտվել պարսկական բռնապետության ժամանակավոր դիջումներից և իր երկիրը բարձրացրեց վարչական-տնտեսական, հատկապես մշակութային մի նոր մակարդակի։

«Աղվանից աշխարհի պատմության» մեջ ոգեշունչ խոսքերով են նկարագրված Վաչագան թագավորի այս եռանդուն գործունեությունը, ապա նրա գումարած Աղվենի սահմանադիր ժողովը, որը և ընդունեց «Սահմանագրութիւն կանոնական»՝ բաղկացած 21 կետից[1]։

Պատմությունը չի նշում Աղվենի ժողովի տարեթիվը։ Այն պետք է ենթադրել Վաչագանի գործունեությանը վերաբերող ժամանակագրական մյուս տվյալներից։ Վաչագանը թագավոր է դարձել Վաչե Բ-ի՝ գահից հրաժարվելուց (460 թ.) երեսուն տարի հետո։ Հետազոտողները գտնում են, որ Վաչագանը գահ է բարձրացել 484 թվականից ոչ վաղ, որովհետև նրան թագադրել է Պարսից Վաղարշ արքան, իսկ Վաղարշի գահակալության առաջին տարին 484 թվականն է։

Պատմագիտական գրականության մեջ ընդունված է Աղվենի ժողովի գումարման տարի համարել 488 թվականը[2]։

Կաղանկատվացին ժողովը գումարված է համարում «յամսեանն Մարերի՝ որ օր երեքտասան էր ամսոյն»[3]։ *Ն. Ակինյանի հաշվումներով՝ մարերի 13-ը համապատասխանում է 460—579 թթ. հուլյան տոմարի ապրիլի 30—մայիսի 1-ին*[4]։

Ն. Ակինյանը միաժամանակ գտնում է, որ եթե ժողովը գումարվել է ամառանոցում, իսկ ապրիլի 30—մայիսի 1-ը վաղ է, ապա պետք է գտնել մարերի 13-ի այնպիսի դրսևորում, որ հարմար լինի ամառանոց բարձրանալու համար։ Եվ հաշվում է, որ 336—459 թթ. ժամանակը հարմար է, որովհետև այդ թվականներին մարերի 13-ը մայիսի 30—հունիսի 1-ին էր համապատասխանում։

---

1 *Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 93—103։*

2 «Очерки истории СССР III—IX вв.», М., 1958, стр. 307; К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.—Л., 1959, стр. 236, 295. *Լեոն գտնում է, որ ժողովը գումարվել է «5-րդ դարի վերջում կամ 6-րդ դարի սկզբում» (տե՛ս նրա «Հայոց պատմություն», հ. 2, Երևան, 1967, էջ 154)։*

3 *Կաղանկատուացի, էջ 98։*

4 *Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւնն Աղուանից («Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 560—561)։*

Ուրեմն, «հարկադրված պիտի ըլլանք 415—459 տարիներեն մին ենթադրել ժողովին տարին»[5]։

Սակայն Ն. Ակինյանը ժողովի թվականի տեղաշարժով չի բավարարվում, մեկիկ-մեկիկ հանում է ժողովի հիմքերը, և այն մնում է օդում կախված, կամ՝ մեկ գումարված հինգերորդ դարի առաջին կեսին, մեկ յոթերորդում և մեկ էլ... առհասարակ չգումարված։

Ահա նրա մյուս փաստարկներից «ամենաղորավորները».

ա) «Քաջն Վարդան ի Միհրան տոհմէն» եթե նախագահն եղած է Աղվենի ժողովին, կենթադրե այդ ժողովը գումարված է է. դարու կեսին»[6]։

բ) «Մատթէ երէցն Դարահոչոյ» չեմ կարող պատմական անձնավորություն համարել»,— հայտարարում է Ակինյանը, դրա համար հիմք ընդունելով Մատթեի՝ մասունքներ բերելու մասին Պատմության մեջ եղած տեղեկության իբր թե կեղծ լինելը. «կհիշվին Ս. Գրիգորի և Ս. Հռիփսիմյանց նշխարները, որոնք Հայաստանեն Աղվանք բերված են։ 618-ին, երբ Կոմիտաս կաթողիկոս բացավ Ս. Հռիփսիմեի դամբանը, գտավ նշխարները կնքված Ս. Գրիգորի և Ս. Սահակի կնիքներով։ Ավելցուց անոնց վրա իր ալ կնիքը։ Ուստի 618-են առաջ չէր կրնար Մատթե երեց նշխարներ տարած ըլլալ Աղվանք»[7]։ Ապա. «Մատթէ երէց Դարահոչոյ» կհիշվի նաև Բերդո վանքի մեջ գումարված ժողովին մեջ, 705-ին»[8]։

գ) Չի հավատում Վաչագանի թղթակցություններին։ Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի՝ առ Վաչագան գրած թղթի մասին գրում է. «թե հատվածս Աբրահամ եպիսկոպոսի դրչեն է, չեմ ուզեր կասկածի ենթարկել։ Բայց չկա որևէ կռվան գրվածքս «թուղթ» (նամակ.—Ու. Բ.) և «թուղթս» Վաչական թագավորի ուղարկած ըլլալու համար»[9]։

Այս եղանակով Ակինյանն ամեն ինչ ժխտում է՝ հասնելով նաև Վաչագան թագավորին. «Այն ամենը, ինչ որ կպատմվի Աղվանից Պատմության մեջ լայնորեն՝ վիպական նկարագիր կկրե։ Չեմ գտներ հոն պատմական կորիզ»[10]։ Հետևապես,— մտածում է Ն. Ակինյանը,— X դարի մատենագիր-խմբագիրը ձեռք է ձգել Աղվենի կանոնները և նրանց հիման վրա հորինել մի Վաչագան բարեպաշտ թագավորի կերպար, սրա շուրջը հյուսել այն բոլոր գեղեցիկ, բայց անհավաստի զրույցները, որ մեզ են հասել Կաղանկատվացուն վերագրվող Պատմության մեջ։

Թե Ն. Ակինյանը որքանով է իրավացի, այդ կտեսնենք ստորև։

Վերջերս Աղվենի ժողովի գումարման տարեթվի և այդ ժողովում ընդունված կանոնների հարցով հանգամանորեն զբաղվել է նաև Ս. Հ. Հովհաննիսյանը[11]։ Մեկ առ մեկ քննելով կանոնների ու նրանց ժամանակի աղերսները, Հովհաննիսյանը գտնում է, որ Ն. Ակինյանի հետևությունները սկզբունքային

---

5 Անդ, էջ 561։
6 Անդ, էջ 554։
7 Անդ։
8 Անդ, էջ 555։
9 Անդ, էջ 558։
10 Անդ, էջ 555։
11 Ս. Հ. Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ (Հայկական ՍՍՀ ԳԱ, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 265—274)։

նշանակություն ունեն հայագիտության համար, մանավանդ, որ գիտնականն Աղվենի կանոնները սերտորեն կապել է Շահապիվանի օրենսդիր ժողովի հետ, հայտնելով այն միտքը, թե Աղվենի կանոնների համար հիմք են հանդիսացել Շահապիվանում ընդունվածները, իսկ դա կարող էր կատարվել նրանց թարմ տպավորության տակ[12]։ Ս. Հովհաննիսյանն իր հերթին լայն քննության է ենթարկում Աղվենի ու Շահապիվանի կանոնների կապերը, եզրակացնում, որ նրանք, ճիշտ է, առնչվում են իրար հետ, բայց երկուսի համար էլ ելակետ են հանդիսացել Աշտիշատում ընդունված կանոնները. «Իրականում Շահապիվանի և Աղվենի համար կանոնական պատվանդան է հանդիսացել Աշտիշատը»[13]։ Ս. Հովհաննիսյանն այս կապերը քննում է բավականին խորիմացությամբ։ Միայն զարմանալի է, թե ինչո՞ւ նա էլ Ակինյանի պես կարծում է, թե Աշտիշատի կամ Շահապիվանի կանոնները Վաչագանի վրա պիտի ազդեին ընդունվելուց անմիջապես հետո։ Նկատի առնելով Հայաստանի 387-ի բաժանումին հաջորդած ժամանակաշրջանը և հատկապես V դարի կեսերը, պետք է մտածել, որ այդ կանոնները Վաչագանի ձեռքը կարող էին ընկնել V դարի վերջին, և հենց այդ ժամանակ էլ Վաչագանը կլիներ նրանց ազդեցության տակ։

Ս. Հովհաննիսյանը Ն. Ակինյանի վարկածը ճշտելու նպատակով տոմարական հաշվումներ է կատարում, պարզում, թե ո՛ր դարում մարերի 13-ը ո՛ր ամսի քանիսի՛ն էր համապատասխանում։ Սակայն այս հաշվումներով հարցը չի լուծվում, որովհետև, եթե պարզվում է, որ Վաչագան Բարեպաշտի ժամանակ մարերի 13-ը համապատասխանում էր ոչ թե ապրիլի 30-ին, այլ մայիսի 1—5-ին[14], միևնույն է, Ս. Հովհաննիսյանը բացառում է «Բարեպաշտի օրոք ժողովի հրավիրումը»[15]։ Իսկ այդ դեպքում էլ ինչի՞ համար էին հաշվումները։

Ս. Հովհաննիսյանի համոզմամբ, Աղվենի սահմանադիր ժողովը հրավիրվել է 372—375 թթ. կամ՝ «Վաչագան 2-րդի թագավորության և Շուփհաղիշայի հայրապետության օրոք, ամենայն հավանականությամբ՝ 372—387 թթ., հունիսի առաջին օրերից մեկում»[16]։ Ս. Հովհաննիսյանն իր այս տեսակետի օգտին խոսող փաստեր է հաստատում Շուփհաղիշայի հայրապետության ժամանակը, որ համապատասխանում է IV դարին, մի քանի հոգևորականների անունների ու կոչումների մեջ նկատվող տարբերությունները և հատկապես՝ Աղվենի կանոնների մեջ Վաչագան Բարեպաշտի ժամանակաշրջանի արտացոլված չլինելը։ Հետազոտողը, օրինակ, հիշում է, որ Վաչագան Բարեպաշտը համառ պայքարով վերացրել է կռապաշտության ու հեթանոսության մնացորդները. «տարածված է եղել նաև մատնահատության ահավոր աղանդը, որը Բարեպաշտի անողոք ջանքերով վերացվում է»[17]։ Սրանք իսկապես եղել են, բայց ժողովի ժամանակ արդեն վերացված էին։ Մատենագիրն Աղվենի ժողովի կանոնները ներկայացնում է որպես հայրենի երկրի հետագա ժամանակների օրենսդրական ծրագիր։ Իսպառ վերացված աղանդներն ու հանցանքներն ինչո՞ւ պիտի մտնեին այդ կանոնների մեջ։

---

12 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 560—561։
13 Ս. Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 271։
14 Անդ, էջ 270—271։
15 Անդ, էջ 271։
16 Անդ, էջ 269 և 274։
17 Անդ, էջ 269—270։

Իսկ եթե մի պահ ընդունենք, թե ժողովը տեղի է ունեցել 372—387 թթ., ապա աղանդների ու հեթանոսության վերապրուկների հարցն առավել սրությամբ կդրվի, քանի որ դրանք այն ժամանակ այնքան շատ էին տարածված, որ շուրջ կես դար հետո Մեսրոպ Մաշտոցը, Հայոց արևելից կողմանք մեկնելով, ստիպված եղավ գրի ու դպրության հետ միասին տարածել նաև քրիստոնեական հավատը (տե՛ս «Պատմութիւն Աղուանից աշխարհի», գլ. Իէ)։

Ս. Հովհաննիսյանն իր օգտին խոսող ո՛չ այնքան հավաստի փաստերը շարադրելիս չի ուզում տեսնել այն արժանահավատ վկայությունները, որոնք անառարկելիորեն հաստատում են իր տեսակետի հակառակը։ Այսպես, օրինակ, հետազոտողը գտնում է, որ Աղվենի ժողովը գումարվել է «ամենայն հավանականությամբ 372—387 թթ.», և որ ժողովի ընդունած կանոնները համապատասխանում են հենց այդ ժամանակի ոգուն։ Բայց ինչպիսի՞ն էր Հայոց արևելից կողմանց պատկերը 372—387 թթ.։ Աղվենը գտնվում էր Արցախում։ Իսկ Արցախը, ինչպես հայտնի է, 360-ականներին, Արշակ երկրորդի դեմ առաջացած դժգոհությունների ժամանակ, ապստամբվել-անջատվել էր Հայոց միացյալ պետությունից, սակայն շատ չանցած՝ Պապ թագավորը շուտով Ուտիքն ու Արցախը (ծայրամասային մյուս գավառների հետ միասին) վերամիացրեց Հայաստանին։ Ինչպես այս ժամանակ, այնպես էլ Հայաստանի 387-ի բաժանումից անմիջապես հետո Հայոց արևելից կողմանց (իմա՝ Կաղանկատվացու նկարագրած Աղվանից աշխարհի) վիճակն այնպիսին չէր, որ ինքնուրույն թագավորություն ունենար, և այս թագավորությունն էլ վերցներ ու իր երկրի համար սահմանադրական կանոններ ստեղծեր։

Ուրեմն, Ս. Հովհաննիսյանի պնդումը խոցելի է հենց իր հիմքում, և այս պատճառով էլ բացառվում է Աղվենի ժողովի գումարումը IV դարի վերջին։

Կա նաև մի այլ շատ կարևոր հանգամանք, որը եթե նկատի առած լիներ Ս. Հովհաննիսյանը, ապա Աղվենի ժողովը V դարի երկրորդ կեսից ետ տանելու մասին չէր էլ մտածի։ Դա Պարտավի փաստն է։ Ժողովի մասնակիցներից են՝ «Շուփհաղիշայ արքեպիսկոպոս Պարտաւայ», «Մաթէ Պարտաւայ երէց»։ Պարտավը V դարի երկրորդ կեսին է կառուցվել, 459 թվականից ոչ վաղ, որովհետև «...ի հրամանէ Պերոզի, պարսից արքայի՝ շինեցաւ ի Վաչէէ Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ»[18]։ Իսկ Պերոզը գահ է բարձրացել 459-ին։ Հետևապես, Պարտավի գոյությունից առաջ Պարտավի հետ կապված մարդկանց մասնակցությամբ ժողով գումարելու հնարավորությունն խսպառ բացառվում է։

Եվ, այսուհանդերձ, փորձենք քննել մյուս փաստարկները, ավելի ճիշտ՝ նրանցից ամենակարևորները։

«Աղվանից աշխարհի պատմության» տվյալներն ու պատմական ժամանակաշրջանի բնութագիրը ցույց են տալիս, որ Աղվենի ժողովը գումարվել է Վաչագան Բարեպաշտի նախաձեռնությամբ և այն էլ V դարի վերջին։

Հայոց արևելից կողմանց թագավորի ամառանոց Աղվենը գտնվում էր «հետագա Գյուլիստան մելիքանիստ գյուղի տեղը»[19]։ Ամառանոցի մոտ, ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում նաև արքունի

---

18 Կաղանկատուացի, էջ 52։

19 Ս. Տ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհայացույց»-ի, Երևան, 1963, էջ 34։

Գյուտական գյուղը[20]։ Վաչագանի աթոռանիստն այս Գյուտականն էր, չնայած նրա ժամանակ արդեն կառուցված էր Պարտավը, ուր պարսից մարզպաններն էին նստում։ Թագավորի աթոռանիստն ու ամառանոցը կլիմայական համարյա նույն պայմաններն ունեին. հետևապես ավելորդ է մտածել, թե ե՞րբ հնարավոր կլիներ բարձրանալ ամառանոց՝ ապրիլի վերջի՞ն, մայիսի՞ն, թե՞ հունիսին։ Եվ եթե մարերի 13-ը Ն. Ակինյանի հաշվումներով համապատասխանում էր 460—579 թթ. հուլյան տոմարի ապրիլի 30—մայիսի 1-ին, իսկ Ս. Հովհաննիսյանի հաշվումներով՝ մայիսի 1—5-ին, ապա այս ժամանակներից և ոչ մեկը չէր խանգարի, որ Վաչագանն իր աթոռանիստից գնար (ոչ թե բարձրանար) մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող ամառանոցն ու այնտեղ ժողով գումարեր։

Քննենք այն տեղեկությունները, որ ընձեռում է «Աղվանից աշխարհի պատմությունը»։

ա) Շուփհաղիշան, որի ժամանակը Ս. Հովհաննիսյանի կողմից օգտագործվում է որպես իր տեսակետի հիմնական ու հիմնավոր կուլան, Վաչագան Բարեպաշտի ժամանակակիցն է, Աղվենի ժողովի մասնակիցը, բայց ո՞չ հայրապետ-կաթողիկոս այն Շուփհաղիշան, որը, ըստ ավանդության, պետք է հաջորդած լինի Աղվանից առաջին եպիսկոպոս Գրիգորիսին և, ըստ Ս. Հովհաննիսյանի պնդման, լինի IV դարում գումարված Աղվենի ժողովի մասնակիցը։

Վաչագան Բարեպաշտի կյանքին ու գործին, նրա ժամանակի անցքերին նվիրված դլուխները Պատմության մեջ են մտել որպես ժամանակակցի ու ականատեսի գրածներ։ Այդ հաստատվում է պատումի նկարագրական անմիջականությամբ և հեղինակի մի շատ կոնկրետ միջամտությամբ. «Եւ տարաւ դիս ի տեղին զոր ցուցեալն էր յառաջ»[21]։ Սակայն այս բոլորը հետագայում խմբագրվել ու «շտկումների» է ենթարկվել։ «Աղվանից աշխարհի պատմության» ուշադիր քննությամբ դժվար չէ վերականգնել ականատեսի գրածների նախաստեղծ վիճակը։ Հեղինակը երկու անգամ խոսում է Շուփհաղիշայի մասին. մեկ՝ երբ նա թագավորի հետ մասնակցում էր ս. Գրիգորիսի նշխարների գյուտի առթիվ կազմակերպված արարողություններին, մեկ էլ՝ Աղվենի ժողովին նրա մասնակցությունն արձանագրելիս։ Առաջին դեպքում Շուփհաղիշան ավագ եպիսկոպոսապետ է («Եւ առեալ թագաւորին ընդ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ գնայր»), երկրորդ դեպքում՝ արքեպիսկոպոս («և Շուփհաղիշայ արքեպիսկոպոս Պարտաւայ»)[22]։ Բերված հատվածներից երևում է, որ առաջինի «պետ» մասն ու երկրորդի «արք»-ը հետագայի հավելումներ են՝ կատարված միանգամայն անհմուտ ձեռքով, որովհետև «աւագ եպիսկոպոսը» հասկանալի է, իսկ «աւագ եպիսկոպոսապետը»՝ թյուրիմացություն։ Այդպես էլ՝ «արքեպիսկոպոս Պարտաւայ»-ը։ Արքեպիսկոպոսը կլիներ «Աղվանից» և ոչ թե «Պարտաւայ»։ Իսկ եթե նկատի առնենք նաև, որ V դարում Պարտավում արքեպիսկոպոսություն (կաթողիկոսական աթոռ) չի եղել, որովհետև, ինչպես հայտնի է, «յորժամ սկիզբն հայ թուականին եղև, ի սոյն ամի

20 Տե՛ս Կաղանկատուացի, էջ 150. «առ հեղեղատովն Տրտուայ մօտ ի գիւղն Գյուտական»։ Գյուտականի ավերակները գտնվում են այժմյան Լեռնային Ղարաբաղի Թալիշ գյուղի մոտ, Թարթառի ափին (Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բաղու, 1895, էջ 230)։

21 Կաղանկատուացի, էջ 85։

22 Անդ, էջ 92 և 98։

փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Զողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ»[23],— այն ժամանակ այլևս ոչ մի հիմք չի մնա մտածելու, թե Պարտավում նստող Շուփհաղիշան եղել է կաթողիկոս։

Ուրեմն, Վաչագան Բարեպաշտի ժամանակակից Շուփհաղիշան կաթողիկոս (իմա՝ հայրապետ, եպիսկոպոսապետ) չի եղել և ոչ մի կապ չուներ IV դարի Աղվանից ենթադրյալ կաթողիկոս Շուփհաղիշայի հետ։ Նա միայն Պարտավի եպիսկոպոսն է եղել, թերևս թագավորից որոշ արտոնություններ վայելած, որի համար էլ պատմիչը նրան «ավագ» տարբերանշանով է պատվել։ Հետագայում Պատմության հավաքող-խմբագիրը, ձեռագրի նկատմամբ իրեն որոշակի ազատություն վերապահած, Շուփհաղիշայի անվանը հանդիպելով՝ այն իրեն ծանոթ միակ Շուփհաղիշա կաթողիկոսի տեղ է ընդունել և կոչումն «ուղղել»։

բ) Վաչագան Բարեպաշտն Աղվենի ժողովին նախապատրաստվելիս հարցումներ է արել ժամանակի նշանավոր մարդկանց, նրանցից ստացել պատասխաններ, որոնց նյութն էլ հիմք է հանդիսացել ընդունած կանոններից մի քանիսի համար։ Այս հանգամանքն ընդունում են Ն. Ակինյանը և Աս. Մնացականյանը[24]։ Իսկ Ս. Հովհաննիսյանը լռում է այս առթիվ։ Սակայն, այսպես թե այնպես, պահպանվել են Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի, Դարահոչի երեց ու գիտնավոր Մատթեի թղթերը, որոնք հասցեագրված են Վաչագան թագավորին։ Ի դեպ Կաղանկատվացու Պատմությունից դուրս է մնացել, սակայն զանազան ձեռագրերում պահպանվել է նաև Պետրոս եպիսկոպոս Սյունեցու թուղթը «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն Տեառն զանազանք, Վաչականի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի և իմաստասիրի»[25]։

Չէր կարող պատահել, որ սրանք բոլորը, խոսքները մեկ արած, մի Վաչագան Բարեպաշտ թագավոր հնարեին և նրան վերագրեին մեկ դար կամ դար ու կես առաջ ապրած մի ուրիշ Վաչագանի ստեղծած կանոնները։ Եթե նրանց համար կարևորը Բարեպաշտ անուն հռչակելը լիներ, այդ անվամբ կկոչեին նախորդ Վաչագանին, և դրանով էլ հարցը կփակվեր։ Իսկ եթե ընդունում ենք, որ նրանք իրոք պատասխաններ են գրել իրենց ժամանակ թագավորած Վաչագանի թղթերին, ապա պարզենք նրանց ժամանակը, որ կլինի և Վաչագան թագավորի ժամանակը։

Մամիկոնեից Աբրահամը «եպիսկոպոս է նստել 489 թվին»,— գրում է Հր. Աճառյանը[26], կրկնելով Բ. Սարգսյանի եզրակացությունը, որ շարադրված է վերջինիս «Աբրահամ Մամիկոնէից թուղթ առ Վաչական և պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի»-ի մեջ (Վենետիկ, 1899, արտատպված «Բազմավէպ»-ի նույն տարեթվից)։

Պետրոս Սյունեցին «Դվինի 554 թվի եկեղեցական ժողովի գլխավոր անդամներից էր»[27], հավանաբար արդեն ծերունազարդ։ Իսկ Վաչագանին իր թուղթն ուղղել էր երիտասարդ տարիներին։ Ուշագրավ է, որ այս եպիսկոպոսը,

---

23 Կաղանկատուացի, էջ 133։

24 Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, էջ 118—130, հատկապես՝ էջ 123։

25 Ն. Ակինյան, նշված աշխ., էջ 558։ Նաև՝ Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 125։

26 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 30։

27 Անդ, հ. Դ, էջ 242։

տեսնելով Դվինի կաթողիկոսության պառակտված վիճակը, առաջարկել էր, որպեսզի Սյունյաց եպիսկոպոսներն Աղվանից մայր աթոռից ստանան մեռոնն ու ձեռնադրությունը[28]։ Նշանակում է՝ նա իր թեմը մեծապես կապել էր Հայոց արևելից կողմանց հոգևոր կենտրոնին, մանավանդ, որ ինքն էլ վաղնջուց սերտորեն կապված էր նրա աշխարհիկ տերերի հետ։

դ) Ն. Ակինյանը չի հավատում Մատթե երեցի գոյությանը, որովհետև, իբր թե, ճիշտ չէ նրա՝ նշխարներ բերելու պատմությունը։ Ս. Հովհաննիսյանը հարցի այս կողմով չի զբաղվել։ Մինչդեռ, ըստ Մ. Կաղանկատվացու, Արցախի Դարահոջ գյուղի Երեց ու գիտնավոր Մատթեն Վաչագան Թագավորի եկեղեցանպաստ գործունեության ականատեսն է, Դվինից սրբերի նշխարներ բերողը, ինչպես նաև Աղվենի ժողովի մասնակիցը[29]։

Նրա բերած նշխարների շուրջն էր, որ Թագավորը կազմակերպեց համաժողովրդական ծեսեր ու տոնախմբություններ։

Ն. Ակինյանը փորձում է ապացուցել, թե Մատթեն Դվինից սուրբ Գրիգորի և սուրբ Հռիփսիմյանց նշխարները չէր կարող բերած լինել, քանի որ դեռևս 618 թ. Կոմիտաս կաթողիկոսը բացելով այդ սրբերի դամբանը, գտավ նշխարները՝ կնքած ս. Գրիգորի և ս. Սահակի կնիքներով[30]։ Ակինյանը չի նկատում, որ այստեղ հակասություն կա. ս. Գրիգորը չէր կարող կնքած լինել իր իսկ նշխարները պարունակող դամբանը։ Սակայն, անկախ այս հակասությունից էլ, տվյալ պարագային մեզ համար երկրորդական նշանակություն ունի նշխարների իսկության հարցը։ Կարևորն այն է, որ պատմական անձնավորություն էր Դարահոջի գիտնավոր երեց Մատթեն՝ ժամանակակիցը Վաչագան Թագավորի, ականատեսը նրա եկեղեցաշեն գործերի և մասնակիցը Աղվենի ժողովի։ Իսկ եթե այսքանն ընդունում ենք, նշանակում է՝ հավատում ենք, որ Վաչագան Բարեպաշտը հեղինակն է Աղվենի ժողովի և նրա ընդունած կանոնների։ Կաղանկատվացու Պատմության մեջ այս բոլորը կա։ Եվ Մատթե երեցի գոյությունն է հաստատում նաև Մ. Չամչյանը՝ նրան համարելով «աշակերտ երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյն»[31]։

դ) Ինչպես Ն. Ակինյանի, այնպես էլ Ս. Հովհաննիսյանի մոտ անտեսվում են հոգևորականների ու աշխարհականների այն կոնկրետ անունները, որ կան Վաչագան Բարեպաշտի գործունեությունը ներկայացնող գլուխներում և, միաժամանակ, Աղվենի ժողովի մասնակիցների ցուցակներում։ Սա չի կարելի հասկանալ այլ կերպ, քան՝ որ նրանք նույն մարդիկ են երկու դեպքում, հետևապես մի անգամ ևս հաստատվում է, որ Աղվենի ժողովի հեղինակը Վաչագան Բարեպաշտն է։ Այդ անուններից են. Հովել հոգևորականը (մասունքների գյուտերի նշանավոր կազմակերպիչ) և Աղվենի ժողովի մասնակից, Հաշվա

---

28 Հր. Ա ճ ա ռ ե ա ն, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 242։

29 Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 98։

30 Ակինյանը գրում է, թե, իբր, Կաղանկատվացու երրորդ գրքի ԺԴ գլխում «Մատթե երէց Դարահոջոյ» կհիշվի նաև Բերդո վանքի մեջ գումարված ժողովին մեջ, 705-ին» (նշվ. աշխ., էջ 555)։ Սակայն Կաղանկատվացու գրքում այդպիսի տեղեկություն չկա, և Շամքորի Բերդի վանքում գումարված ժողովի մասնակիցների անուններն էլ չեն հիշատակվում (տե՛ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 360, իսկ ռուս. թարգմ. մեջ՝ էջ 255)։

31 Հ. Մ. Չ ա մ չ ե ա ն ց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 219։ Հովհան Մանդակունին կաթողիկոս է եղել 478—490 թթ.։

(Հոնաց) եպիսկոպոս Հունանը, որ «ի Մազքթաց աշխարհէն էր»[32], ապա վանացերեց Հակոբը[33]։

Աղվենի ժողովի մասնակից աշխարհիկ մեծավորների մեջ Ն. Ակինյանի ուշադրությանն է արժանացել Վարդան քաջը, որի առիթով նա գրում է. «Քաջն Վարդան ի Միհրան տոհմէն» եթե նախագահ եղած է Աղվենի ժողովին, կենթադրե այդ ժողովը գումարված է է. դարու կեսին»[34]։

Պետք է նկատել, որ դեպքերի ժամանակակից, ինչպես վերն ասացինք, նաև մասնակից մատենագիրը չէր ասում, թե քաջ Վարդանը Միհրական տոհմից է։ Եվ չէր էլ կարող ասել, որովհետև այս տոհմն Աղվանքում ոտք է դրել VII դարի սկզբին[35]։ Ապա՝ ժողովի նախագահը, դեպքի ժամանակակից մատենագրի վկայությամբ, ինքը՝ թագավորն է եղել։ Հետագայում Միհրական տոհմը ևս Վարդան Քաջ կոչված ներկայացուցիչ է ունեցել, որի մասին նրա ժամանակակիցը գրել է. «որ շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս»[36]։ Խմբագիրը «Պատմության» մեջ երկու Քաջ Վարդան տեսնելով՝ նրանց միացրել է ու ներկայացրել այսպես. «Քաջն Վարդան ի Միհրական Տոհմէն, որ յաւուրս Վաչականայ Աղուանից արքայի յԱղուէն ժողովոյն յարքայէն նախագահ եղեալ...»[37]։

Այս երկու «Քաջ Վարդան»-ները նույնը լինել չէին կարող, որովհետև իրարից բաժանված էին ավելի քան մեկ հարյուրամյակով։ Նաև այն պատճառով, որ Միհրանյան տոհմը նստել էր Գարդմանքում, իսկ Աղվենի ժողովի մասնակից Քաջ Վարդանը կապ չուներ Գարդմանքի հետ։ Այն ժամանակ Գարդմանքի տերն էր ժողովի մի այլ մասնակից՝ Խուրսը։ Եվ միանգամայն իրավացի է Ս. Հովհաննիսյանը, երբ Պատմության մեջ աղավաղված «Վարդան Քաջ Գարդմանատէր Խուրս»[38] սխալ կապակցությունն ուղղում-դարձնում է «Վարդան Քաջ, Գարդմանատէր Խուրս»[39]։ Վերջինս Գարդմանքի իշխան այն Խուրսն էր, որ Աղվենի ժողովից ավելի քան կես դար առաջ Մեսրոպ Մաշտոցին դիմավորել էր իր տիրույթում. «Ընդ առաջ լիներ նմա (Մաշտոցի — Ու. Բ.) իշխան Գարդմանից, որում Խուրս կոչէին, և ասպնջական եղեալ նմա աստուածասէր երկիւղածութեամբ, առաջի դնէր զանձն վարդապետին, հանդերձն իշխանութեամբն իւրով»[40]։

Վերջում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև մի այլ հարցի, որը կարևոր նշանակություն ունի ինչպես Աղվենի ժողովի գումարման ժամա-

---

32 Կաղանկատուացի, էջ 66, 98։

33 Անդ, էջ 66, 98։

34 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 554։

35 Միհրանյանները պարսիկներ էին և Գարդմանք էին փախել իրենց թագավոր Խոսրով Փարվեզի վրեժխնդրությունից, իսկ Խոսրովը գահակալել է VII դարի սկզբին (տե՛ս Լեո, Հայոց պատմ., հ. 2, էջ 212—214, Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 18 ևն)։

36 Կաղանկատուացի, էջ 196։

37 Անդ, էջ 348։

38 Անդ, էջ 103։

39 Ս. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 269։

40 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 72։

Խուրսի մասին՝ տե՛ս նաև Խորենացի, Պատմութիւն հայոց, էջ 340։ Վերը շարադրածից պարզ է, որ սխալում է Կ. Վ. Տրևերը, երբ հանձին Աղվենի ժողովի մասնակից Քաջ Վարդանի տեսնում է Միհրանի նախնիներից մեկին, որն, իբր թե, ապրել է V դարում (տե՛ս նրա «Очерки...», էջ 236)։

նակը ճշտելու, այնպես էլ առհասարակ Հայոց արևելից կողմանց վարչաքաղաքական մի շատ էական կողմը բացահայտելու տեսակետից։

Ս. Հովհաննիսյանը, Աղվենի ժողովի հեղինակ Վաչագանի անձնավորության հարցը պարզելու նպատակով, Աղվանքի թագավորների ժամանակագրության մի երկար վերլուծություն է կատարում։ Այս դեպքում նրա համար հիմքը «Աղվանից աշխարհի պատմության» մեջ եղած Աղվանից թագավորների ցուցակն է, որին նա, որքան էլ զարմանալի լինի, հավատում է անվերապահ կերպով։

Ո՞վ է կազմել այդ ցուցակը, ի՞նչ նպատակով, և այն իրենից ի՞նչ է ներկայացնում։ Հայտնի է, որ Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» մի բանաքաղություն է՝ վերջնականապես խմբագրված X դարում։ Բանաքաղող-խմբագիրն իր առաջ նպատակ է դրել ստեղծելու Աղվանից աշխարհի պատմությունը՝ սկզբից մինչև իր օրերը։ Նա նյութեր է քաղել հայրենի մատենագիրներից, հավաքել անանուն տարեգիրների գործերը և սրանք շարելով իրար կողքի, ինքն էլ լրացումներ ու մեկնաբանություններ է կատարել և ստեղծել մի շընդմիջվող պատմություն։

Սակայն, դժբախտաբար, բանաքաղողը հետապնդել է նաև մի այլ նպատակ՝ ցույց տալ, որ Աղվանից աշխարհը միշտ էլ եղել է ինքնուրույն, ունեցել է իր սեփական թագավորությունը, բուն Հայաստանից ավելի վաղ է ընդունել քրիստոնեությունը ևն։ Այսքանը ներկայացնելու համար նա հորինել և Պատմության մեջ է մտցրել մինչև 551 թ. գոյություն չունեցած կաթողիկոսների, մինչև Վաչեն ու Վաչագանը չեղած Աղվանից թագավորության ներկայացուցիչների ցուցակներ, որոնց պատմականությունը հաստատող ո՞չ մի հատիկ փաստ կամ փաստաթուղթ չի կարողանում վկայակոչել։ Այսպես. նա Պատմության սկզբում խոստովանում է, որ «Ըստ կարգի զրոյցք յԱռանայ մինչև ցՈւռնայր Աղուանից արքայ և ցՏրդատ Հայոց արքայ ոչ գտաք»[41]։ Սակայն հետո ցուցակ կազմելիս Առանի և Ուռնայրի արանքն է մտցնում Վաչագան Քաջին ու Վաչեին (առաջին)։ Այս սկզբունքով էլ հորինում է թագավորների նոր անուններ՝ Վաչագան երկրորդ, Մրհավան, Սատո, Ասա, չբացատրելով, թե որտեղի՞ց են քաղված այդ անունները և, եթե դրանք թագավորներ էին, ապա ի՞նչ հիմունքով են համարվում տերերն այն աշխարհի, որ կոչվել է Աղվանք և փռված է եղել «ի գետէն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ» (Կուրի վրա)[42]։

Բանաքաղողն այսքանով էլ չի բավարարվում։ Նա իր հորինած թագավորների ու նրանց աշխարհի չեղած-չլսված պատմություններ էլ է հորինում (Արտավազդ հայոց թագավորի ու Աղվանքի դաշինքը, Արտաշեսի ու Աղվանից միաբանությունը, ապա ճակատամարտը ևն), պնդելով, թե «յայսմ նպաստաւորէ մեզ քերթողահայրն Մովսէս»[43]։ Իսկ քերթողահայր Մովսես Խորենացին այդպիսի Աղվանք չգիտե։ Նրա պատկերացրած Աղվանքը հայկական Ուտիք և Արցախ աշխարհների միասնությունն է, որի վրա Վաղարշակ թագավորը կուսակալ (և ոչ թե թագավոր) էր կարգել հայկաղուն Առան Սիսակյանին, և սրա «աղու» (անուշ) բարքի շնորհիվ էլ երկիրը կոչվել էր «Աղուանք»։

---

41 Կաղանկատուացի, էջ 19։
42 Անդ, էջ 14։
43 Անդ, էջ 19։

Առանի հետնորդները միշտ էլ կուսակալներ կամ իշխաններ են եղել։ Հայոց Արշակունիների թագավորության անկումից հետո՝ նրանք մարզպանության շրջանում ձեռք բերեցին որոշ ինքնուրույնություն և իրենց հռչակեցին թագավորներ (Առանշահիկներ)։ Գրավոր պատմությունը գիտե այդպիսի երկու թագավորի՝ Վաչեին ու Վաչագան Բարեպաշտին, որոնց տիրապետությունը տարածվում էր միայն Արցախի և Ուտիքի, հաճախ նույնիսկ միայն Արցախի վրա։ Դրանում համոզվելու համար բավական է թեկուզ նայել Աղվենի ժողովի մասնակիցների ցուցակը։ Այստեղ ճիշտ է, հոգևոր ներկայացուցիչներ կային Աղվանից եկեղեցու համարյա բոլոր թեմերից, օրինակ, Ալբանիա-Աղվանքից՝ «Մանասէ Կապաղա եպիսկոպոս... Շմաւոն Յուոյ քորեպիսկոպոս...»։ Իսկ աշխարհիկ մեծավորներ կային միայն Արցախից։

Պատմական այս իրականությունը հաստատապես հուշում է, որ մինչև մարզպանական շրջանը Աղվենի ժողով չէր կարող գումարված լինել։ Դրանից առաջ Ուտիքն ու Արցախը եղել են Հայոց միասնական թագավորության մեջ և ոչ կարիք ունեին, ոչ էլ կարող էին ինքնուրույն սահմանադրական կանոններ ստեղծել իրենց համար։ Այդ կանոնների կարիքը կենսական դարձավ, երբ նրանք պարսկահպատակ մարզի ներսում ստեղծեցին իրենց թագավորությունը և սկսեցին ապրել շատ թե քիչ ինքնուրույն պետական կյանքով։

Այսքանից հետո մնում է եզրակացնել, որ, Աղվենի ժողովը գումարվել է V դարի վերջին, և ժողովը գումարել ու կանոններն էլ ընդունել է Վաչաղան Բարեպաշտ հայկազուն թագավորը։

ЕЩЕ РАЗ О ВРЕМЕНИ СОЗЫВА АГВЕНСКОГО СОБОРА

Б. А. УЛУБАБЯН

Резюме

В источниках по истории средневековой Армении есть прямые указания о созыве Вачаганом Благочестивым Агвенского собора, который принял «каноническое установление».

Однако в последние годы этот общепринятый факт дважды был отвергнут. Н. Акинян полагал, что Агвенский собор был созван в VII в. Затем С. Оганнисян пришел к выводу, что собор мог быть созван только в IV в.

В статье доказывается, что Агвенский собор не мог быть созван в VII в., ни, тем более, в IV, так как указанные в источниках участники—исторические личности, жившие в конце V и начале VI вв. Исключается и возможность созыва в IV в., во-первых, потому, что до V в. Арцах и Утик входили в состав Армении и не могли принять собственную «каноническую конституцию». Во-вторых, участниками собора были Шупхагиша—архиепископ Партава и Матэ-Партавский иерей, а Партав был построен после 459 г.

На основе этих и других аргументов автор приходит к выводу, что Агвенский собор был созван в конце V в. Вачаганом Благочестивым.